2017 թվականի նոյեմբերի 20-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը շրջայց կատարեց Սամցխե-Ջավախքի և Ծալկայի փոխառաջնորդությունում: Թեմական առաջնորդին ընկերակցում էին Վրաստանում ՀՀ դեսպանության խորհրդական Արտակ Գրաբսկին, թեմի ֆինանսական բաժնի տնօրեն Մարգարիտա Կիրակոսյանը և վարչա-տնտեսական բաժնի տնօրեն Կարեն Երիցյանը:

Վազգեն Սրբազանի առաջին կանգառը Ծալկայի շրջանի Նարդևան գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցին էր: Թեմական առաջնորդը տեղի

հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Ղևոնդ քահանա Թոփաշյանի ուղեկցությամբ այցելեց եկեղեցի, ուսումնասիրեց եկեղեցու ընդհանուր վիճակը, ունկնդրեց հոգևոր հովվի կատարած աշխատանքի մասին տեղեկատվությունը և Տեր հոր հետ միասին Սուրբ խորանի առջև կատարեց միասնական աղոթք:

Վիրահայոց թեմի առաջնորդը այց կատարեց նաև Նինոծմինդայի Ռաֆայել – Ջավախ կրթամշակութային և երիտասարդության կենտրոն,, որտեղ շրջանի հոգևոր հովիվ արժանապատիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանը ներկայացրեց հովվությունում և կենտրոնում տարվող աշատանքները:

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

JNEWS

[illegible]

[illegible]